

գլուխը, այդ հրավառ աչերը, ուր ահեղ զօրութիւն կը փայլատակեր «Սասնոյ լեռանց առիւծը» տեսանք, կ'ըսէին:

Բայց Բուդայ պետք էր երթալ եւ չէր կրնար ուշացնել իւր գազանային արշաւանքը, ուստի վերջին փորձ մ'էլ ուզեց փորձել եւ իւր կրօնքին պաշտօնէից գիտուն մէկը դրկեց, որ թերեւս կարենայ համոզել զհովնան, որ թողու իւր հայրենի կրօնքը եւ ընդունի մահմեդականութիւնը: Սակայն այդ մարդը շուտով ելաւ եւ յայտնեց իւր տիրոջ թէ համոզել անկարելի էր, եւ թէ կրօնին օգուտը կը պահանջէր ժամ առաջ վերցնել չարն ի միջոյ:

Երկրորդ օրը մեծ զօրաց բազմութենէ եւ դահիւեճներէ շրջապատեալ հանեցին բանտէն Յովնան անխռով եւ անսասան, եւ սպանման տեղը բերին: Շղթայներէ ծանրացեալ թելերը վեր վերցուց, աղօթեց եւ տուաւ վիզը մահուան. սուրը փայլակեց, գլուխը գլորեցաւ, ժողովուրդը ցրուեցաւ, եւ հազիւ թէ քիչ մը ժամանակ անցաւ, Սմբատ Սպարապետ կը մտնէր բռնաւորին քով, եւ նա կը շնորհէր իրեն առնուլ նահատակին մարմինը:

Քիչ վերջը առաւօտ մը կանուխ՝ կառք մը կ'ելնէր Դուին քաղքէն խումբ մը ձիաւորաց պահպանութեամբ. այդ խումբին գլուխն էր երիտասարդ Մուշեղ Սպարապետին երկրորդ որդին, եւ որուն առջեւէն սեւեր հագած՝ սեւ քօղով ծածկեալ բարձրահասակ կին մը կը ձիավարի երկու իրեն պէս հագնուած կանանց հետ: Լռութիւն եւ սուգ կը տիրէին այս կարաւանին մէջ, մինչեւ որ հասան Բագարան, հոն աւանը չի մտած քիչ մը յոգնութիւն առիւն, եւ երբ աւանին մօտեցան տեսնուեցաւ բազմութիւն մը եկեղեցական դասու, որ խնկոք եւ մոմոք մարտիրոսաց շարականներ երգելով բերին կառքը, որ Յովնանու մարմինը կը կրէր՝ մինչեւ եկեղեցուոյ դուռը:

Օրերով այս կարաւանը շարունակեց իր ընթացքը մինչեւ Արտանուշի գաւառը հասաւ. Սմբատաւանի մայր եկեղեցին մարմինը գրուեցաւ յարգանօք ինչպէս կը վայելէր մարտիրոսի մը եւ ազատարարի, եւ ժողովուրդը կը յիշէր այդ սասնցուոց զօրավարը, որ վտանգի օր